Հավելված 2
2024 թ. _փետրվարի 07 -ին
*կնքված N ԴՏՊ-1141-11018/24 ՀԿՇ պայմանագրի*

Դրամաշնորհային հաշվետվություն տարեկան

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | Գյումրու Փոքրիկ Իշխան ցերեկային խնամքի սոցիալական կենտրոն |
| Դրամաշնորհի N | *ԴՏՊ-1141-11018/24 ՀԿՇ* |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | Հայկական Կարիտաս բարեգործական ՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | Հունվար 2024թ. – Դեկտեմբեր 2024թ. |
| Հաշվետու ժամանակահատված | Հունվար 2024թ. – Դեկտեմբեր 2024թ. |
| Ներկայացման օր | Հունվար 10, 2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Աննա Մարտիրոսյան, Կենտրոնի համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար։

| |
|---|
| Համառոտ նկարագիր<br>2024թ-ին Կենտրոն է հաճախել և ծառայություններից օգտվել՝<br>Ընդհանուր - 138 երեխա /102 ընտանիք, 15 Արցախից երեխաներ<br>Մուտք - 58 երեխա / 39 ընտանիք<br>Ելք - 53 երեխա / 38 ընտանիք<br>Հատուկ կարիք – 11 երեխա<br>Հաշմանդամություն ունեցող – 11 երեխա<br>Կրթությունից դուրս մնացած – 1 երեխա<br>ԱԾԽՄ – 3 երեխա<br>Կենտրոնի բոլոր երեխաները, ըստ սոցիալական աշխատողների կարիքի գնահատման արդյունքների, օգտվել են Կենտրոնի կողմից տրամադրվող ծառայություններից։ |

Կենտրոնի գործողությունների իրականացմանը ներգրավված են եղել 1 համակարգող, 4 սոց. աշխատող, 1 հոգեբան, 1 լոգոպեդ, 9 խմբավար/մանկավարժ, մեկ խոհարար, մեկ տնտեսուհի և 4 տեղացի կամավոր և 3 ֆրանսիացի կամավոր:

*Ցերեկային խնամքի կենտրոնի անձնակազմը հաշվետու շրջանում երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգեկան կարողությունների, կյանքի հիմնական հմտությունների զարգացման նպատակով իրականացրել է աշխատանքային պլանով, թիվ 1 և 7 հավելվածով սահմանված հետևյալ գործողությունները:*

1. Սոցիալ-հոգեբանական, լոգոպեդական անհատական և խմբային աշխատանքներ:
2. Մասնագիտական կողմնորոշման խմբակներ:
3. Կինոակումբ, էկոակումբ:
4. Միջոցառումներ, փորձի փոխանակման այցեր:
5. Բնապահպանական ծրագրեր:
6. Բնապահպանական ամառային ճամբար:
7. Փափուկ հմտությունների և ՄՁ դասընթացներ:
8. Անգլերեն լեզվի ուսուցում:
9. Մենթորինգի ծրագիր:
10. Համայնքային նախաձեռնություն:
11. Դրական ծնողավարման դասընթաց:
12. Ծնողների հզորացման դասընթացներ և ինքնաօգնության խմբեր:
13. Բնաիրային աջակցություն:
14. Դասընթացներ/վերապատրաստումներ աշխատակիցների համար:

<u>1. Սոցիալ-հոգեբանական աշխատանք երեխաների և ծնողների հետ</u>

*Սոցիալական անհատական աշխատանք* - 54 երեխա և 66 ծնող/խնամակալ:
*Հոգեբանական անհատական աշխատանք* - 26 երեխա և 10 ծնող/խնամակալ:
Ընտանեկան սոցիալական աշխատանք – 11 զույգ:
**Ընտանեկան հոգեբանական աշխատանք** - 4 զույգ:
*Սոցիալական կարիքի գնահատում և վերագնահատում* - 27 ընտանիք:
*Հոգեբանական կարիքի գնահատում* - 11 երեխա:
Լոգոպեդական առաջնային հետազոտություն – 21 երեխա:
Լոգոպեդական անհատական աշխատանք – 8 երեխա:
**Լոգոպեդական խմբային աշխատանք** – 36 երեխա:
Սոցիալական խմբային աշխատանք – 5 խումբ:
Տնայցեր – 34, որից 20 նախնական, 14 կրկնակի, 3 Արցախցի ընտանիք:

**Անձնական օգնականի** աջակցությունից օգտվել է հաշմանդամություն ունեցող 1 երեխա:
**Արտակենտրոն աշխատանք** է իրականացվել 1 ընտանիքի հետ, որի մայրը գտնվել է Երևանի արյունաբանական հիվանդանոցում և երեխան մնացել է առանց ծնողական խնամքի, քանի որ միայնակ մոր երեխա է: Վտանգ կար, որ երեխան կարող է դուրս մնալ կրթությունից: Իրականացվել է դեպքի քննարկումներ թիվ 25, 45, 28, 40, 30 դպրոցների, Մարզպետարանի առողջապահության և սոցիալական հարցերով զբաղվող բաժնի, Երեխայի և ընտանիքի

աջակցման կենտրոն ՊՈԱԿ-ի, Հայ-ֆրանսիական Լույս հիմնադրամի, Տիրամայր Հայաստան քոլեջի, բոլոր Ցերեկային խնամքի կենտրոնների, ՄՍԾ-ի և Ոստիկանության անչափահասների բաժնի հետ:

**Երեխաների հետ անհատական սոցիալական աշխատանքը** կատարվել է հետևյալ թեմաների շուրջ՝ Կարիքի գնահատում, Մենթորինգ, Հարաբերությունների դժվարություններ հասակակիցների, ընտանիքի անդամների հետ, Ներանձնային դժվարություններ, Կոնֆլիկտների հաղթահարում, Մասնագիտական կողմնորոշում, Խեղված վարք, Անձնական հիգիենա, Առողջ ապրելակերպ, Առողջական խնդիրներ, Վարքային խնդիրներ, Հետաքրքրություններ, նախասիրություններ, Երազանքներ, Վախեր և անհանգստություններ, Երեխայի հուզականություն, Էմոցիաների կառավարում, Ցածր ինքնագնահատական, Միրահարվածություն, Սթրեսի հաղթահարում, Միջամտության պլանների վերանայում, Հոգեբանի և լոգոպեդի աշխատանքի ներկայացում և ուղղորդում, Աշխատանքի տեղավորում, Ծնող-երեխա փոխհարաբերություններ, Ծնողի կորուստ, Համախմբի բացակայություններ, Դասընթացներին մասնակցության կարևորություն, Կենտրոնի երեխաների նկատմամբ դրսևորած ոչ հարգալից վերաբերմունք և այլն:

**Երեխաների հետ խմբային սոցիալական աշխատանք** է իրականացվել լոգոպեդի, սոցիալական աշխատողների և հոգեբանի կողմից:

1-ին խումբ, 2-8 տ 8 երեխա, սոց. աշխատող՝ Ֆ. Գալստյան: Թեմաներ՝ ավազաթերապիա, զարգացողական խաղեր, թիմային աշխատանք:

2-րդ խումբ, 13-15 տ 11 երեխա, սոց. աշխատող՝ Ա. Սարգսյան: Կյանքի հմտություններ խմբային աշխատանք:

3-րդ խումբ, 12-15 տ 10 երեխա, հոգեբան՝ Հ. Խորոտյան: Կյանքի հմտություններ խմբային աշխատանք:

4-րդ խումբ, / խառը խումբ, 28 երեխա/, լոգոպեդ՝ Ա. Նահապետյան, լոգոպեդական խմբային աշխատանք:

5-րդ խումբ, խառը խումբ 10 երեխա, սոց. աշխատող Ա. Աղայան: Պաշտպանողական վարքագիծ խմբային աշխատանք:

**Ծնողների հետ անհատական սոցիալական աշխատանքը** կատարվել է հետևյալ թեմաների շուրջ. Կարիքի գնահատում, Երեխայի տարիքային առանձնահատկություններ, Առողջական խնդիրներ, Ուղղորդումներ, Հատուկ կարիք ունեցող երեխայի առանձնահատուկ կարիքներ, Ներընտանեկան կոնֆլիկտներ, Երեխայի վարքային խնդիրներ, Հարաբերությունների դժվարություններ, Երեխայի անվտանգություն և ծնողավարում, Փաստաթղթային խնդիրներ, 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող շահառուի զբաղվածության խնդիր, Դպրոց փոխելու ընթացակարգ, Հատուկ կարիք ունեցող երեխայի զբաղվածության ապահովման դժվարություններ, Կենտրոնի աշխատանքների ներկայացում, Պայմանագրի և ներքին համաձայնագրի կնքում, Ընտանիքին վերաբերող փաստաթղթերի փոխանցում, Հղիություն, Ծնողավարման հետ կապված հարցեր, Կրթական հարցեր, Կենտրոնի հաճախելիություն, Խնդիրներ դպրոցում/երեխայի դպրոցը փոխելու համար անհրաժեշտ ընթացակարգեր, Երեխայի մասնագիտական կողմնորոշում, Կենտրոնում երեխայի և ընտանիքի ստացած ծառայությունների ամփոփում և դուրս գրում, Միջամտության պլանների կազմում և վերանայում, Ընտանիքում առաջացած խնդիր, Հաշմանդամություն ունեցող անձի զբաղվածություն:

**Ընտանեկան սոցիալական աշխատանք** է տարվել երեխաների առողջական խնդիրների, մասնագիտական կողմնորոշման, դպրոցում երեխայի վարքային խնդիրների, երեխայի ինքնուրույնություն ձեռք բերելու, ինքնավստահության և որոշում կայացնելու, ինչպես նաև

Կենտրոնում կոնֆլիկտներ առաջացնելու վերաբերյալ, որն առնչվում էր երեխայի առողջապահական խնամքին, էթիկայի կանոններին, ինչպես նաև երեխաներին պատրաստել այլ ծրագրերում ընդգրկվելու համար:

Հոգեբանական անհատական աշխատանք և խորհրդատվություն է իրականացվել հետևյալ թեմաների շուրջ՝ Շփման դժվարություններ, Վարքային խնդիրներ, Ծնող- երեխա փոխհարաբերությունների դժվարություններ, Մեծահասակների հետ շփման դժվարություն և վախ մեծահասակներից, Սուգը հաղթահարելու դժվարություն, Սոցիալական հմտությունների պակասով պայմանավորված մասնագիտական կողմնորոշման դժվարություններ, Բռնությունը ճանաչելու և դրանից պաշտպանվելու կարողությունների պակաս, Հատուկ կարիքներով պայմանավորված սոցիալականացման դժվարություններ, Մեծահասակների հետ հաղորդակցման դժվարություն, Ուսուցիչների հետ կոնֆլիկտային փոխհարաբերություններ պայմանավորված խտրականության առկայությամբ, Հասակակիցների հետ շփման դժվարություններ, Դեռահասության ճգնաժամը հաղթահարելու դժվարություններ, Հոգեբանական աշխատանք է տարվել 1 նախկին շահառուի հետ, Դրական ծնողավարություն իրականացնելու դժվարություն, Երեխայի հատուկ կարիքներին համապատասխան և զգայունությամբ արձագանքելու դժվարություն, Ըստ երեխայի տարիքային առանձնահատկությունների խնամք կազմակերպելու դժվարություն:

Ընտանեկան հոգեբանական աշխատանք է կատարվել հետևյալ թեմաներով՝ Խրոնիկ հիվանդության հայտնաբերման արդյունքում առաջացած երեխայի ստրեսային վիճակը գնահատելու և զգայունությամբ արձագանքելու դժվարություն, Հատուկ կարիքներով պայմանավորված գերխնամքի դրսևորում, որը արգելակում է երեխայի հոգեկան զարգացումը, Բռնությունից երեխաների պաշտպանելու և ծնող-երեխա փոխհարաբերություններում կապ ապահովելու դժվարություն:

Լոգոպեդական աշխատանք է իրականացվել փետրվար ամսից: Երեխաների դիտումներ են իրականացվել խմբակներում: Իրականացվել է առաջնային գնահատումներ երեխաների և նրանց ծնողների հետ: Հայտնաբերվել են հետևյալ խնդիրները. Սուլական հնչյունների խնդիր, միջատամնային սիգմատիզմ, դիսգրաֆիա, երկլեզվություն, երևակայական և ստեղծագործական մտածողության զարգացման կարիք, կակազություն, խոսքի ընդհանուր թերզարգացում: Անհատական լոգոպեդական աշխատանքներ են իրականացվել երեխաների հետ, ինչպես նաև խորհրդատվություններ՝ ծնողների հետ:

Լոգոպեդական խմբային աշխատանքներ են իրականացվել թ տարբեր տարիքային խմբերով /ընդամենը 11 հանդիպում/ հետևյալ թեմաներով՝ Ինտելեկտուալ մրցակցային աշխատանք, Խաչբառերի կազմում, Ընդհանրացումներ, Ով եմ ես, Ինչ է, ով է, Ինչ գիտենք երկիր մոլորակի մասին, Այգեպան, Տարվա եղանակները, Պատկերացումներ և իրականություն, Բառակազմիկ, Ամանորյա հեքիաթ: Խմբային աշխատանքների նպատակն է երեխաների մոտ զարգացնել երևակայությունը, խոսքի տրամաբանական կապը, շտկել հնչարտաբերությունը:

Երեխաների և նրանց ծնողների հետ իրականացվել է առաջնային կարիքի գնահատումներ և վերագնահատումներ. սոցիալական, հոգեբանական և լոգոպեդական: Իրականացվել է առաջնային և նախնական տնայցեր, ինչպես նաև Արցախից բռնի տեղահանված ընտանիքների տնայցեր և կարիքի գնահատումներ: Արցախցիների համար իրականացվել է ուղղորդումներ, սննդի փաթեթների տրամադրում և սոցիալական անհատական աշխատանք: Իրականացվել է համատեղ դեպքի քննարկումներ ՄՍԾ-ի, շահագրգիռ կառույցների և դպրոցների հետ:

12 երեխա ուղղորդվել է ՍՈԱՄ/Ծնողազուրկ Երեխաների Հայ Օգնության Միություն/ ատամնաբուժական կլինիկա, 1 երեխա ուղղորդվել է պոլիկլինիկա բժշկական հետազոտման նպատակով:

Շիրակի տարածաշրջանային քոլեջի սոցիալական աշխատանք բաժնի 7 ուսանող իրենց ուսումնական պրակտիկան են անցկացրել ՓԻ կենտրոնում: Ուսումնասիրել են սոցիալական աշխատանքի դեպքի վարման փաստաթղթերը, մասնակցել են խմբային աշխատանքներին և Ընտանիքի օրվան նվիրված միջոցառմանը:

## 2. Մասնագիտական կողմնորոշման խմբակներ

Կենտրոնում գործել են հետևյալ խմբակները՝

- ✓ Երգի և դաշնամուրի խմբակ
- ✓ Նկարչության/փայտագործության խմբակ
- ✓ Համակարգչային հմտություններ
- ✓ Սպորտի խմբակ
- ✓ Կարուձևի խմբակ
- ✓ Հմուտ ձեռքերի խմբակ
- ✓ Խոհարարության խմբակ

Յուրաքանչյուր խմբակում գործել է 2 տարբեր խումբ: Խմբակներին մասնակցել են տարեկան 87 երեխա: Տարեկան Կենտրոնում գործել է խմբակների 4 փուլ: Յուրաքանչյուր փուլի տևողությունը 3 ամիս է:

1-ին փուլում խմբակներին մասնակցել են ընդամենը 73 երեխա:

2-րդ փուլում խմբակներին մասնակցել են ընդամենը 60 երեխա:

3-րդ փուլում խմբակներին մասնակցել են ընդամենը 48 երեխա:

4-ին փուլում խմբակներին մասնակցել են ընդամենը 56 երեխա:

Հաշվետու շրջանում բոլոր խմբակները իրականացրել են պլանով նախատեսված աշխատանքները, միջոցառումները:

## 3. Կինոսերների և թատերասերների ակումբներ

2024 թվականին Կենտրոնը հյուրընկալել է երեք ֆրանսիացի կամավոր, որոնք կազմակերպել են թատերասերների և կինոսերների ակումբներ: Նպատակը երեխաների խոսքի, ինքնարտահայտման, ինքնավերլուծության և թատերական հմտությունների զարգացումն էր: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են կարճամետրաժ և լիամետրաժ ֆիլմերի դիտումներ և քննարկումներ: Երկու կամավորներ աշխատել են տարվա սկզբում, իսկ մեկ ուրիշը՝ նոյեմբեր ամսից: Ակումբները կազմակերպվել են շաբաթական մեկ անգամ սկզբունքով՝ բոլոր ցանկացող երեխաների համար:

## 4. Միջոցառումներ, փորձի փոխանակման այցեր

Հաշվետու շրջանում կազմակերպվել է հետևյալ միջոցառումները:

**Հունվար, Փետրվար** /3 անգամ/ ամիսներին Կենտրոնի թվով 42 երեխայի համար իրականացվել է Դահուկային սպորտի դասընթացներ Ամասիայի տարածաշրջանում:

**27 Փետրվար** –Հանդիպում նկարիչ Ալբերտ Իսրայելյանի հետ /13 երեխա/:

**06 Մարտ** – ֆուտբոլային խաղի դիտում քաղաքային մարզադաշտում /5 երեխա/:

**21 Մարտ** – Դաունի համախտանիշի միջազգային օր /14 երեխա/:

**04 Ապրիլ** – Աուտիզմի միջազգային օր /22 երեխա/:
Ապրիլ - Մշակույթի միջազգային օր, համագործակցային միջոցառումների շարք /60 երեխա, 24 ծնող բոլոր համագործակից կառույցներից/:
**07 մայիս** – Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա հետ կապված հանդիպում Գյումրու փոխքաղաքապետի հետ /17 երեխա/:
**15 մայիս** – Ընտանիքի պաշտպանության միջազգային, Իմ իրավունները և իմ ընտանիքը խորագիրը կրող միջոցառում / ընդհանուր թվով 73 երեխա, ծնող համագործակից բոլոր կառույցներից/:
**04 հունիս** – Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր /29 երեխա, 13 ծնող, ընտանիքի 1 անդամ, 1 կամավոր/:
**09 հուլիս** – Էքսկուրսիա Լոռու մարզ / 32 երեխա/: Էքսկուրսիայի ընթացքում 12 երեխա առողջ ապրելակերպի մարզիչի և համակարգողի հետ իրականացրեց քայլարշավ:
**10-12 հուլիս** – Կրթական ամառային ճամբար Թեղուտ գյուղի Աղաջանյան ճամբարում:
Կենտրոնի 4 երեխաներ մասնակցել են աշակերտական խորհրդի ամառային ուսումնական ճամբարին՝ ներառական, կրթություն, նորարարություն թեմաներով: Ճամբարը կազմակերպել էր Հայկական Կարիտաս ԲՀԿ-ի «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան որակյալ կրթության կայացմանը» ծրագիրը:
**19 հուլիս** - Միջմշակութային երկխոսություն բաց երկնքի տակ /30 երեխա Կենտրոնից և Ֆրանսիայից ժամանած 25 դեռահաս/:
**28 հուլիս** - Հառապտուղների փառատոն Հայկավան գյուղում /15 երեխա/: Փառատոնի ավարտին Գյումրու Կենտրոնի սաները արժանացան «Այցելուների համակրանք» մրցանակին:
**08 օգոստոս** – Բոուլինգ ամառային ճամբարում հաղթող թիմի համար:
**16 օգոստոս** – Երեխաների Իրավունքներ միջոցառում: 10 երեխա Խաչմերուկ հիմնադրամում մասնակցեցին երեխաների իրավունքների խնդիրների մասին հեքիաթների բեմադրությանը:
01 հոկտեմբեր - «Ոչ բռնությանը» համագործակցային միջոցառում /26 երեխա բոլոր կենտրոններից/:
**06 նոյեմբեր** - «Երեխայի լավագույն շահը»՝ Բռնության կանխարգելման ֆորում միջոցառում: / 79 երեխա համագործակից կառույցներից/:

**Իրավախախտ վարք, տեսալսողական և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երեխաների իրավունքների իրազեկման արշավ:** Միջոցառումներին ընդհանուր թվով մասնակցեցին 44 երեխա, 7 ծնող, 3 կամավոր:
**09 նոյեմբեր** – Դասընթաց. Իմ իրավունքները և իմ զգայարանները տեսալսողական և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երեխաների նկատմամբ զգայունացման բարձրացում և նրանց իրավունքների պաշտպանություն / 8 երեխա/: **18 նոյեմբեր** – Դասընթաց. Իրավախախտ վարք և վարքի դրսևորումները / 10 երեխա/:
**21 նոյեմբեր** – Արդարադատության հետ առնչվող երեխաների իրավունքների իրազեկում, քննարկում Մուշ համայնքային ոստիկանության տեսուչի կողմից / 24 երեխա 3 ծնող/:
**21 նոյեմբեր** – Դասընթաց. Ինչ է հոգեկան առողջությունը, ինչպես արձագանքել և ում դիմել / 16 երեխա/:
**21 նոյեմբեր** – Դասընթաց. Շեղվող վարք ունեցող երեխաներ / 5 ծնող /:
**22 նոյեմբեր** – ֆիլմի դիտում և քննարկում երեխաների իրավունքների վերաբերյալ / 21 երեխա/ :

19 դեկտեմբեր – Ամանորյա միջոցառում Ներառումը Գործնականում համագործակցային ցանցի անդամների հետ համատեղ, որին մասնակցել են Կենտրոնի բոլոր երեխաները:

20 դեկտեմբեր – Ամանորյա թատերական միջոցառում, կազմակերպված Խաչմերուկ հիմնադրամի կողմից: Կենտրոնից մասնակցեցին 30 երեխա:

5. Բնապահպանական ծրագրեր

Փետրվար-հունիս ամիսներին Հայկական Կարիտաս ԲՀԿ-ի «Փոքրիկ բնապահպաններ» ուսուցողական լաբ նախագիծը կազմակերպեց մի շարք դասընթացներ, քայլարշավներ և ճանաչողական այցեր Կենտրոնի շահառու երեխաների, ծնողների, ինչպես նաև թիվ 25 դպրոցի երեխաների համար: Ծրագրի նպատակն է Կենտրոնում ներդնել բնապահպանական տեսական և գործնական գիտելիքներ և հմտություններ, որոնք հիմք կհանդիսանան Կենտրոնում ստեղծելու էկո ակումբ երեխաների համար և իրականացնել մի շարք բնապահպանական ծրագրեր: Բոլոր դասընթացները և այցերը իրականացրել է կենտրոնի սոցիալական աշխատող՝ Ֆենյա Գալստյանը, իսկ քայլարշավները առողջ ապրելակերպի խմբավար Գագիկ Ասլանյանը: Իրականացվել են հետևյալ միջոցառումները

- ✓ 2 դասընթաց - էներգախնայողության և կլիմայի փոփոխության վերաբերյալ, 21 երեխա:
- ✓ Օճառագործության վարպետության դաս Լոֆթ կենտրոնում, 22 երեխա, որից 14 շահառու և մեկ մասնագետ Կենտրոնից, 6 երեխա դպրոցից և 2 ուսուցչուհի 25 դպրոցից:
- ✓ Ուսուցողական այց և դասընթաց Մարգահովիտի ուսումնական կենտրոնում կենսաբազմազանության, գլոբալ տաքացման, անտառ, ջուր թեմաներով, 23 երեխա, 1 կամավոր և 2 մասնագետ:
- ✓ Ուսուցողական այց Տավուշի մարզի Կանաչ ուսուցման կենտրոնում, 20 երեխա և 2 մասնագետ:
- ✓ Այգեգործության գործնական դասընթաց Էմիլի Արեգակ կենտրոնում 4 երեխայի համար և վկայականների հանձնում: Վերջիններս մասնակցել են նախորդ տարվա այգեգործության և ջերմոցների ստեղծման աշխատանքներին:
- ✓ 12 ապրիլ - 16 երեխա և 4 ծնող, 1 սոցիալական աշխատող մասնակցել են Էմիլի Արեգակ կենտրոնում ջերմոցային ուսուցման ծրագրով կազմակերպված տեղեկատվական հանդիպմանը:
- ✓ 23 ապրիլ – ՓԻ կենտրոնի և թիվ 25 դպրոցի 20 երեխա, մեկ ուսուցչի, սոցիալական աշխատող և ծրագրի համակարգող այցելել են Վահրամաբեր գյուղի Ռոզի ջերմոց:
- ✓ 01 մայիս – Քայլարշավ Անուշավանի կիրճ և բնապահպանական դասընթաց, 9-17 տ. 17 երեխա, Առողջ ապրելակերպի խմբավարը, սոց. աշխատողը և համակարգողը:
- ✓ 11 մայիս - Ուսումնական այց Արթիկի Էլակի ջերմոց, 22 երեխա կենտրոնից:
- ✓ 19 մայիս - Այցելություն Գյումրու օդերևութաբանական հիդրոմետ կայան, 20 երեխա և սոց. աշխատող՝ Ֆ. Գալստյանը:
- ✓ 18 մայիս – Դասընթաց՝ հող և ջուր թեմաներով, 12 երեխա:
- ✓ 19, 20, 21 մայիս – Կենտրոնի բակի մաքրում, ձևավորում, ջերմոցի պատրաստում, ածիլների տնկում և այգիների փորում երեխաների հետ: / 28 երեխա, աշխատակիցներ և նախկին շահառու/
- ✓ 21 մայիս – Դասընթաց կենսաբազմազանության վերաբերյալ: Մասնակից՝ 17 երեխա:
- ✓ 27 մայիս – Դասընթաց՝ Կենսաանվտանգություն և գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմ / ԳՄՕ/ թեմաներով, 12 երեխա:
- ✓ 14 հունիս – Դասընթաց ածխածնային ոտնահետքի վերաբերյալ, 12 երեխա:

- ✓ 18 հունիս – Ճանաչողական այց և քայլարշավ Արփի լիճ, 9-18 տ. 17 երեխա և սոցիալական աշխատող:
- ✓ 23 հունիս – Ճանաչողական այց և քայլարշավ Խոսրովի անտառ պետական արգելոց, 11-18 տ. 21 երեխա, ինչպես նաև Առողջ ապրելակերպի խմբավար, սոցիալական աշխատողը և համակարգողը:
- ✓ 24 հունիս – Դասընթաց ածխածնային ոտնահետքի վերաբերյալ, 12 շահառու ծնող:

Ծրագրի ավարտին Կենտրոնը ձեռք է բերել գույք և պարագաներ: Մասնագիտական գրականություն, գորգ, մեծ թվով հետադիտակներ, խոշորացույցեր, կողմնացույցեր, արշավական ուսապարկեր, էկո պայուսակներ, գրենական պիտույքներ, պահարան, թղթի վերամշակման սարք, խոհանոցային, այգեգործական գործիքներ, սերմեր, հող, սածիլներ, էկո աղբամաններ, ծաղկամաններ, սենյակային և բակի համար նախատեսված բույսեր, սպունգ, փայտ և այլ նյութեր:

6. Բնապահպանական ամառային ճամբար

2024 թվականի հուլիսի 29-ից օգոստոսի 2-ը «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի Գյումրու «Փոքրիկ իշխան» կենտրոնը իրականացրեց բակային էկո ճամբար կենտրոնի երեխաների համար, որին միացան նաև 16 արցախցի երեխաներ և 15 երեխաներ՝ համայնքից: Ընդամենը մասնակցեց 93 երեխա:

- ✓ Էկոճամբարի նպատակն էր կրթել էկոգաղափարակիր երեխաներ, որոնք կկարողանան դրական ազդեցություն ունենալ հասարակության մեջ: Ճամբարի բոլոր գործողություններն ունեին բնապահպանական ուղղվածություն, որոնք ներառում էին ոչ միայն տեսական գիտելիքներ, այլ նաև պրակտիկ գործողություններ:
- ✓ Ջոկատավարները ընտրվել են Կենտրոնի 16+ տարեկան երեխաները, որոնք անցել են վերապատրաստման տարբեր դասընթացներ: Կազմակերպչական թիմին էին միացել նաև նախկին սաները: Կազմվել էր 5 ջոկատ. Արև, Հող, Ջուր, Քամի, Անտառ անվանումներով, ովքեր մշակել էին իրենց նշանաբանը և դրոշը: Ջոկատները միմյանց հետ մրցել են 5 օրերի ընթացքում և վաստակել միավորներ: Միավորների արդյունքում հաղթող ջոկատ է ճանաչվել Ջուր ջոկատը և վաստակել հաղթանակը: Հաղթող ջոկատի մրցանակն էր Բոուլինգ և էքսկուրսիա: Ջոկատավարները ստացան էկո վկայականներ՝ ճամբարի ընթացքում պատրաստված վերամշակված թղթերից:

Էկո ճամբարի օրակարգում տեղ էին գտել՝

- ✓ Դասընթացներ՝ թղթի վերամշակում, սոցիալական ներառում, երկիր մոլորակը և ես,
- ✓ Բնապահպանական թեմայով TedX ելույթներ,
- ✓ Ինտելեկտուալ և թիմային ակտիվ խաղեր, Սպորտլանդիա, Ֆորտբոյար,
- ✓ Թափոնների վերամշակում. պոլիէթիլենային տոպրակներից ստացած թելերով պայուսակներ, պլաստիկ շշերից պատրաստած տարբեր իրեր,
- ✓ Պրակտիկ աշխատանքներ. բույսերի տնկում, պատառների պատրաստում, բնության մակետներ՝ պատրաստված թափոններից և բնական նյութերից:

7. Փափուկ հմտությունների դասընթաց

Կենտրոնում իրականացվում է «Փափուկ հմտությունների» դասընթաց 16-19 տարեկան երեխաների և երիտասարդների համար: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է 21 դասընթաց 7 երեխաների հետ հետևյալ թեմաներով՝

- ✓ Խմբի ձևավորում և սպասելիքների հավաքագրում,
- ✓ Փափուկ հմտություններ ընդդեմ կոշտ հմտությունների,
- ✓ Ինքնաճանաչում, անձնային հատկություններ,
- ✓ Կրթություն և մասնագիտական արժեքներ,
- ✓ Մոտիվացիա, կրթական փորձ,

- ✓ Անձի զարգացման ծրագիր,
- ✓ Հաղորդակցություն և համագործակցություն,
- ✓ Հաղորդակցության և համագործակցության էթիկա, հաղորդակցություն սոցիալական լրատվամիջոցներում,
- ✓ Ինչպես կազմել գրագետ CV,
- ✓ Ինչպես կազմել մոտիվացիոն նամակ,
- ✓ Ինչպես անցնել հարցազրույց,
- ✓ CV-ի, մոտիվացիոն նամակի ներկայացում և հարցազրույցի նախապատրաստություն,
- ✓ Բնապահպանական թեմաների վերաբերյալ դասընթաց, հրավիրված դասընթացավար,
- ✓ Թիմի ձևավորում և թիմային աշխատանք,
- ✓ Ներառական առաջնորդ, հրավիրված դասընթացավար,
- ✓ Թղթի վերամշակման դասընթաց, հրավիրված դասընթացավար,
- ✓ Պլանավորման և իրականացման հմտություններ:

Սոցիալական ձեռներեցության դասընթաց

Հռիփսիմե Պետրոսյանը հանդիսանալով սոցիալական ձեռներեց Կրաշեն գյուղում, կենտրոնի երեխաների համար անցկացրեց դասընթաց Սոցիալական Ձեռնարկատիրության վերաբերյալ: Դասընթացին մասնակցեցին թվով 15 երեխա: Վերջիններս գաղափար կազմեցին ինչ է ՍՁ, և սոցիալական խնդիրը և սոցիալական ազդեցությունը:

## 8. Անգլերեն լեզվի ուսուցում

Փոքրիկ Իշխան ծրագիրը, համագործակցելով Օքսֆորդի համալսարանի հետ, երեխաների համար սկսել է իրականացնել անգլերեն լեզվի հեռավար ուսուցում: Ուսուցումը կազմակերպում է Օքսֆորդի համալսարանի ուսանողի կողմից, շաբաթական 1 անգամ: Տարվա ընթացքում իրականացվել է դասընթացներ 2 խմբի համար, ընդհանուր 15 երեխա:

## 9. Մենթորինգի ծրագիր

Հաշվետու ժամանակաշրջանում մենթորինգի ծրագիր է իրականացվել թվով 5 զույգ մենթոր-մենթիի հետ: Նշվածներից բոլորը հաջողությամբ ավարտել են իրենց աշխատանքները՝ ունենալով դրական արդյունքներ:

Մենթորներ և մենթիների համատեղ աշխատանք

1. Հռիփսիմե Մուրադյան/ ՍՕԱՐ հիմնադրամի տնօրեն/- Էմմա Խաչիկյան-մենթի: Աշխատանքի նպատակը՝ թիմի և կառույցի ղեկավարման հմտությունների ձեռք բերում: Աշխատանքը ավարտած է, երեխան ներգրավվել է ՍՕԱՐ երիտասարդական ծրագրերի մեջ:
2. Անի Համալբաշյան / Հայկական Կարիտասի աշխատակից / – Ռեբեկա Գալստյան-մենթի: Աշխատանքի նպատակը՝ սոցիալական միջավայրի ընդլայնումը: Մենթին ձեռք է բերել գիտելիքներ մենեջերական աշխատանքների վերաբերյալ, ինչպես նաև սկսել է հաճախել անգլերենի խմբակ:
3. Անուշ Հարությունյան / Հայկական Կարիտասի աշխատակից/ – Հասմիկ Ներսիսյան-մենթի: Անձնային աճ է տեղի ունեցել մենթիի մոտ՝ ինքնավստահության և հաղորդակցման հմտությունների ձեռքբերում:

4. Ագապի Մանուկյան / Մախարովի մարդու իրավունքների Կենտրոն, իրավաբան/ – Մերի Դավթյան: Աշխատանքի նպատակը՝ Մասնագիտական կողմնորոշում, անձնական կապերի ընդլայնում: Աշխատանքը հաջողությամբ ավարտված է, երեխան ձեռք է բերել մասնագիտական կողմնորոշում և ներգրավվել է երիտասարդական կամավորական ծրագրերի մեջ:
5. Հայկարամ Դրմեյան / Հայկական Կարիտասի աշխատակից, դասախոս / – Սերգեյ Բաղդասարյան-մենթի: Աշխատանքի նպատակը՝ Մասնագիտական կողմնորոշում, աշխատանքը հաջողությամբ ավարտված է:

<u>10. Համայնքային նախաձեռնություն</u>

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 2 համայնքային նախաձեռնություն:
1-ինը Կենտրոնի երեխաների հետ, 2-րդը համայնքի բնակիչների հետ:

**1-ին համայնքային նախաձեռնություն:** Շահառու 12-ից 14 տարեկան 22 երեխա մասնակցել է համակարգողի կողմից իրականացվող համայնքային նախաձեռնություն ծրագրին:

- ✓ Սառույցկոտրուկ, թիմի ձևավորում,
- ✓ Թիմային աշխատանք, որոշումների կայացում,
- ✓ Համայնքային աշխատանք. ռեսուրսների հավաքագրում և պլանավորում,
- ✓ Համայնքային գործունեություն և կենտրոնի տարածքի մաքրման աշխատանքներ:
- ✓ Դասընթաց՝ Սոցիալական պատասխանատվություն:
- ✓ Կենտրոնի բակի մաքրում, բերքահավաք գործնական աշխատանքներ:
- ✓ Դասընթաց՝ Համայնքային աշխատանք

Դասընթացներից հետո երեխաները նախագիծ են առաջարկել իրականացրել համայնքային ծրագիր մանկապարտեզում: Նպատակը երեխաների հետ զարգացողական և ժամանցային խաղերի կազմակերպումն էր: Իրականացվել է՝

- ✓ Համայնքային նախագիծ, պլանավորում, գործնական հմտություններ – 2 հանդիպում:
- ✓ Գործնական աշխատանքների կազմակերպում մանկապարտեզում – 3 հանդիպում:

Այս խմբի երեխաների կողմից կազմակերպվել և իրականացվել է բակի մաքրում: Վերջիններս դարձել են նախաձեռնող խումբ և միացել բնապահպանական ծրագրերի մեջ ներգրավված երեխաների խմբին՝ կիսելով պատասխանատվությունը Կենտրոնի բակի մաքրման գործում:

**2-րդ համայնքային նախաձեռնություն:** Կենտրոնի աշխատակիցները համայնքի բնակիչներից առաջարկ են ստացել բարելավել Շերամ թաղամասի սոցիալական տարածքը՝ այն վերածելով խաղահրապարակի: Համայնքի բնակիչների շրջանում կա շատ ակտիվ և նախաձեռնող խումբ, որն արդեն մաքրման աշխատանքներ և ծառատունկ է կազմակերպել այդ տարածքում:

Զուգահեռաբար քաղաքապետարանը հայտարարել է մասնակցային բյուջետավորման ծրագիր: Հաշվի առնելով համայնքի բնակիչների ակտիվությունն ու արդեն իսկ կատարված աշխատանքները՝ Փոքրիկ Իշխան կենտրոնի աշխատակիցները համայնքին են ներկայացրել տվյալ տարածքում խաղահրապարակ ունենալու ծրագիր: Ծրագիրը անցել է երկրորդ փուլ, իսկ վերջին քվեարկության արդյունքներով զբաղեցրել է 2-րդ տեղը: Համայնքապետարանը լրացուցիչ նիստ է գումարել, ցանկանալ աջակցել ծրագրին՝ տեղադրելով խաղեր և նստարաններ: Մաքրման աշխատանքները և ծառատունկը իր վրա է վերցրել ՓԻ կենտրոնի թիմը և համայնքի բնակիչները:

11. Դրական ծնողավարման դասընթաց

Հաշվետու շրջանում մեկնարկվել է ծնողավարման դասընթացի նոր խումբը 9 ծնողի մասնակցությամբ: Խումբը վարում է հոգեբանը: Խմբում մասնակցել են հիմնականում այն ծնողները, ովքեր ունեն մինչև 7 տարեկան երեխաներ: Թիմի կողմից որոշում է կայացվել, որ այդ ծնողները կարող են իրենց հետ բերել մանկահասակ երեխաներին, քանի որ խնամող չունեն տանը: Այդ իսկ պատճառով այդ երեխաների համար Կենտրոնում խաղային մեթոդներով իրականացվել է սոցիալական խմբային աշխատանք սոցիալական աշխատողի կողմից: Դասընթացները տեղի են ունեցել շաբաթական 1 անգամ /1ժամ ու կես տևողությամբ/ և տևել են հունվարից մինչև մայիս ամիսները:

Դասընթացի թեմաներն են. Ակնկալիքների ձևակերպում, Ծնողավարում, ծնողավարման սահմանում, Ծնողավարման ոճեր, Ծնողավարման սկզբունքներ, Ընտանիքը որպես երեխայի զարգացման միջավայր, Ծնողավարման վարքականոններ, Պատիժ և վարքականոններ, Երեխաների կարիքներ, Ծնողների կարիքներ և պահանջմունքներ, Կապվածություն, Կապվածության հարաբերությունների ազդեցությունը երեխայի զարգացման պրոցեսի վրա, Տարիքային զարգացման փուլերը, Դեռահասության ճգնաժամ, Երեխայի իրավունքներ, Բուլինգը և հետևանքները, Կոնֆլիկտ, կառուցվածքը, լուծման եղանակներ, Բռնություն, բռնության տեսակները, հետևանքները:

12. Ծնողների հզորացման դասընթացներ

Կենտրոնի ծնողների հզորացման, բազմակողմանի իրազեկման նպատակով Կենտրոնը պարբերաբար կազմակերպում է տարբեր դասընթացներ ծնողների համար:

**Աուտիզմով և մտավոր խնդիրներ՝ խնամք և վարք դասընթաց:** Դպրոցների ծնողական խորհուրդների թիմը Կենտրոնի ծնողների համար «Ներառական ծրագրի» շրջանակներում կազմակերպել էր 2 դասընթաց՝ աուտիզմով և մտավոր խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատելու թեմայով: Դասընթացներին կենտրոնից ընդգրկվել էին 23 ծնողներ, որոշ ծնողներ ունեին հաշմանդամություն ունեցող երեխաներ:

**Ծնողների խնամք դասընթաց՝** 11 ծնող մասնակցել է դասընթացին, որը անցկացրել է Կենտրոնի վերապատրաստում անցած սոցիալական աշխատողը: Այս դասընթացը կազմակերպվել է «Ծնողության դպրոց» ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

**Ինքնաջակցման խումբ.** Հաշվետու ժամանակահատվածում ստեղծվել է ինքնօգնության խումբ՝ բաղկացած 8 ծնողից: Ծնողները հանդիպել են յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ անգամ: Ընդհանուր թվով 6 հանդիպում հետևյալ թեմաներով. խմբի ձևավորում, կանոնների մշակման գործընթաց և երեխայի խնամքի դժվարությունները, Հայրենիքին ծառայության անցած ծնողների անհանգստությունները և լարվածությունները, երեխաների կախվածությունը հեռախոսից: Ծնողները և երեխաները միասին մասնակցել են խոհարարական ակումբի, որտեղ պատրաստել են համատեղ պիցցա:

10. Բնաիրային աջակցություն

Հաշվետու ժամանակաշրջանում օգտվել են հետևյալ բնաիրային աջակցությունից՝

- ✓ Օրական 1 անգամ տաք սնունդ կենտրոն հաճախող բոլոր երեխաների համար: 1 երեխան այցելում է 2-3 անգամ, որոշ երեխաներ նաև 4 անգամ, կախված երեխայի կարիքներից և ծառայություններից:
- ✓ Կոկա Կոլա ընկերության կողմից Ամանորյա նվերներ - 50 երեխա:
- ✓ Ամանորյա պարկեր Կենտրոնի կողմից – 92 երեխա:
- ✓ Գրենական և հիգիենիկ պարագաներ - 80 ընտանիք:
- ✓ Սննդի փաթեթ Հայկական Կարիտասի կողմից, որոնց մեջ եղել են նախկին շահառուներ, Արցախից բռնի տեղահանվածներ և ծանր իրավիճակում գտնվող ոչ շահառու ընտանիքներ – 100 ընտանիք:
- ✓ Էլեկտրաէներգիայի և/կամ գազի վարձավճար 40.000-60.000 դրամ - 20 ընտանիք:
- ✓ Հագուստ 14.000 դրամի չափով - 15 երեխա:
- ✓ Սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ - Արցախից տեղահանված ընտանիք:
- ✓ Սննդի փաթեթներ -3 ընտանիք ծայրահեղ ծանր վիճակում գտնվող:
- ✓ Գազի կտրոն, չոր սննդի փաթեթ և երեխաների հագուստ - Արցախից բռնի տեղահանված ընտանիք:
- ✓ Հագուստի փաթեթ - 2 շահառու ընտանիք:
- ✓ 50.000 դրամ գազի վճարման և սննդի փաթեթ - 1 ընտանիք:
- ✓ Սննդի փաթեթ, հիգիենայի պարագաներ և 40,000 դրամ գազի վարձավճար – 1 շահառու ընտանիք:

11. Դասընթաց / վերապատրաստում/Սեմինար աշխատակիցների համար

Հաշվետու շրջանում իրականացվել է մի շարք սեմինարներ, դասընթացներ, վերապատրաստումներ աշխատակիցների համար Ծրագրի և այլ կառույցների կողմից:

1. Սեմինար-քննարկում Մարդու իրավունքների պաշտպանի կենտրոնում՝ աշակերտների մոտեցման զարգացման վերաբերյալ: Մասնակից՝ սոցիալական աշխատող:
2. Դասընթացավարների թրեյնինգ „Բացահայտել կանանց ներուժը սոցիալական ձեռներեցության ոլորտում„: Մասնակից՝ համակարգող:
3. ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից կազմակերպված սեմինար Հայաստանում ջրի բարելավման կառավարում հանուն կայուն տնտեսական աճի ծրագիր: Մասնակից՝ համակարգող:
4. Հայկական Կարիտասի Երեխաների պաշտպանության և ներառական կրթության ոլորտի ռազմավարության մշակում: Մասնակից՝ համակարգող:
5. Շրջակա միջավայրի պահպանության և բնապահպանական կրթության հիմունքների վերաբերյալ դասընթաց: Մասնակից՝ սոցիալական աշխատող, համակարգող:
6. Միջմշակութային երկխոսություն արցախցի և հայաստանցի կանանց միջև, բարբառաթերապիայի և խոհանոցային թեմաներով: Մասնակից – համակարգող:
7. 2 սոցիալական աշխատող Սյունիքի ՀԿ-ների ներկայացուցիչների համար անցկացրել են սոցիալական աշխատանքի վերաբերյալ դասընթաց:

8. Սյունիքի ՀԿ-ների համար կազմակերպվել է դասընթաց «Փափուկ հմտություններ» թեմայով: Դասընթացավար՝ Ֆենյա Գալստյան:
9. Դասընթաց Փոքրիկ Իշխան կենտրոնների անձնակազմերի համար Լոռու մարզում: Թեման՝ Վերականգնվող էներգիա, էներգաարդյունավետություն և էներգիայի խնայողություն, Կլիմայի փոփոխություն, վերջինիս պատճառները և հետևանքները:
10. Սյունիքի ՀԿ-ների համար կազմակերպվել է առցանց դասընթաց՝ դժվար շահառուների հետ աշխատանքի վերաբերյալ՝ դասընթացավար Անի Աղայան:
11. Առցանց թրեյնինգ թվային հմտությունների զարգացման և արհեստական ինտելեկտի վերաբերյալ: Մասնակից՝ համակարգող:
12. Վարքագծի վերլուծության մեջ հմտությունների ձեռքբերման սկզբունքները, դասընթաց: Մասնակից՝ մասնագիտական թիմ, խմբավարներ:
13. Մասնագիտական այրման կանխարգելում, դասընթաց: Մասնակից՝ սոցիալական աշխատողներ:
14. «Սոցիալական համերաշխության տնտեսություն և համայնքային ներգրավվածության պատրաստություն և մենթորություն», կազմակերպված Հայկական Կարիտասի համայնքային ծրագրի կողմից: Մասնակից՝ համակարգող:
15. Սոցիալական աշխատանքի պատրաստություն և մենթորություն Սյունիքի ՀԿ-ների համար: Թրեյներներ՝ սոցիալական աշխատող Անի Աղայան, Ֆենյա Գալստյան:
16. Սոցիալական աշխատողների սուպերվիզիա, կազմակերպված սուպերվիզոր Մեան Մինասյանի կողմից, Ֆրանսիա:
17. Սեմինար «Բիզնեսի և օրգանական պարարտանյութի արտադրության հնարավորությունները և առավելությունները Հայաստանում»: Մասնակից՝ Ֆենյա Գալստյան:
18. «Ծնողություն և հոգեբանական աջակցություն փոխօգնության ծրագիր», կազմակերպված UNICEF-ի և «Ծնողության դպրոց» ՀԿ-ի կողմից: Մասնակից՝ Ֆենյա Գալստյան:
19. «Երեխայի կորուստ» օնլայն դասընթացներ, կազմակերպված UNICEF-ի և «Ծնողության դպրոց» ՀԿ-ի կողմից՝ մասնակից Ֆենյա Գալստյան:
20. «Դրական ծնողավարման մոդուլի մշակում» աշխատանքային սեմինար «Փոքրիկ Իշխան» կենտրոնում: Մասնակից՝ «Փոքրիկ Իշխան» կենտրոնների բոլոր մասնագիտական աշխատակիցները և Ներառական ծրագրերի աշխատակիցները:
21. «Պաշտպանողական վարքագիծ» դասընթաց: Մասնակից՝ Անի Աղայան:
22. «Մանկավարժական խմբի հաշմանդամություն ունեցող երեխաների սուպերվիզիա»: Մասնակից՝ կենտրոնի ողջ աշխատակազմը:
23. «Ինքնօգնության բանալին՝ մարմնի ընկալում» գրքի ներկայացում: Մասնակից՝ համակարգող:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացը՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

Սոցիալ-հոգեբանական և լոգոպեդական անհատական և խմբային աշխատանքների արդյունքում բարելավվել են ընտանեկան և հասակակիցների միջև միջանձնային փոխհարաբերությունները, **երեխաները** դարձել են ավելի ինքնուրույն, հեշտությամբ են ինքնարտահայտվում, հետևում են անձնական հիգիենային, կարևորում են կրթությունը, առողջ ապրելակերպը, հասակակիցների հետ ավելի հեշտությամբ են շփվում /բարելավվել են շփման հմտությունները/, ծնողները վերանայել են իրենց ծնողավարման հմտությունները, գիտակցում են իրենց կարևորությունը սեփական երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում, որոշ շահառուները ձեռք են բերել մասնագիտական հմտություններ ևս:

**Մասնագիտական կողմնորոշման խմբակների և ակումբների** արդյունքում երեխաները ձեռք են բերել խմբակին համապատասխան գիտելիք և հմտություններ, վեր են հանվել երեխաների կարողություններն ու հմտությունները, զարգացել է երեխաների ազատ արտահայտվելու և թիմային աշխատելու հմտությունները:

**Միջոցառումները** խթանել են երեխաների և ծնողների ազատ արտահայտումը, շփումը և հաղորդակցումը, ինչպես նաև նպաստել են նրանց գիտելիքների զարգացմանը բռնության տեսակների, միջմշակութային երկխոսության, երեխաների իրավունքների, հայկական մշակույթի և հոգեկան առողջության խնդիրների մասին: Համագործակցային գործունեությունը լայնացրել է երեխաների աշխարհայացքը, նպաստել է նրանց ազատ շփմանը հասակակիցների, անծանոթների և մասնագետների հետ, ինչպես նաև զարգացել է ծնող-երեխա առողջ երկխոսությունը:

**Բնապահպանական միջոցառումները** երեխաներին տվել են բնապահպանական գիտելիքներ և գործնական հմտություններ: Նրանք ձեռք են բերել գիտելիքներ էներգախնայողության, կլիմայի փոփոխության, կենսաբազմազանության, ջրի և հողի պահպանման, ինչպես նաև այգեգործության և շրջակա միջավայրի պահպանության մասին: Խորհրդատվական այցերի և քայլարշավների ընթացքում երեխաները խորացել են իրենց բնապահպանական գիտելիքներում և սովորել են աշխատել խմբերով՝ իրականացնելով մաքրման և այգեգործական աշխատանքներ: Միջոցառումները նպաստել են նրանց իրազեկվածության բարձրացմանը և պատասխանատվության գիտակցության ձևավորմանը բնության պահպանության հարցերում:

**Բնապահպանական ճամբարը** 16+ տարեկան **երեխաների** մեջ զարգացրել է առաջնորդական և սոցիալական հմտություններ, ովքեր աշխատել են որպես ջոկատավարներ: Բոլոր երեխաները ձեռք են բերել երկիր մոլորակի և **բնապահպանության** վերաբերյալ գիտելիքներ և կարևոր հմտություններ: Բարձր են գնահատել բնությունը, ընկերասիրությունը, թիմային աշխատանքը և փոխօգնությունը՝ դառնալով Փոքրիկ Իշխան Կենտրոնի էկոգաղափարակիրներ:

**Փափուկ հմտությունների դասընթացը** երեխաներին **փոխանցել** է գիտելիքներ և նպաստել է երեխաների վերլուծական մտածելակերպի և ինքնագնահատականի բարձրացմանը:

**Անգլերենի լեզվի ուսուցումը** նպաստել է **երեխաների** խոսակցական հմտությունների բարելավմանը, ովքեր ցանկանում են խորացնել լեզուն և խոսել այդ լեզվով:

**Մենթորինգի ծրագիրը** օգնել է երեխաների լայնացնելու իրենց մտահորիզոնը և ծանոթանալ նոր մարդկանց հետ և ընդգրկվել այլ կառույցներում կամավորական ծրագրերի մեջ:

**Համայնքային նախաձեռնության** արդյունքում երեխաները ձեռք են բերել մի շարք կարևոր հմտություններ և գիտելիքներ: Նրանք սովորել են թիմային աշխատանք, արդյունավետ որոշումների կայացում և ռեսուրսների հավաքագրում՝ կենտրոնի տարածքի մաքրում և համայնքային գործունեություն իրականացնելու ընթացքում: Դասընթացներից հետո երեխաները խթանվել են սոցիալական պատասխանատվություն դրսևորելու և համայնքային խնդիրներին լուծումներ առաջարկելու: Նրանք նաև զարգացրել են պլանավորման և գործնական հմտություններ՝ մանկապարտեզում կազմակերպելով զարգացնող խաղեր: Այս նախաձեռնությունը ոչ միայն նպաստել է երեխաների պատասխանատվության զգացողության և թիմային աշխատանքի զարգացմանը, այլև խթանել է նրանց ակտիվ մասնակցությունը համայնքային կյանքի մեջ՝ համագործակցելով Կենտրոնի և համայնքի բնակիչների հետ:

**Դրական ծնողավարման և հզորացման դասընթացները** բարելավել են ծնողավարման հմտությունները, ծնողները դարձել են ավելի զգայուն, ավելի ներգրավված են երեխաներին վերաբերող հարցերում, արձագանքում են կարիքներին և հետևողական են կրթական, առողջապահական հարցերին: Ձեռք են բերել ծնողավարման, երեխայի տարիքային առանձնահատկությունների, խնամքի և վարքի վերաբերյալ գիտելիքներ: Նաև աուտիզմով և մտավոր խնդիրներով երեխաների հետ աշխատելու համար: Նրանք նաև սովորել են հոգ տանել իրենց բարեկեցության մասին և խնամքի դժվարությունները քննարկել միմյանց հետ: Ինքնաօգնության խմբում ծնողները զբաղվել են փոխօգնությամբ և քննարկել են երեխաների հոգեկան խնդիրները, ինչպես նաև նրանց տեխնոլոգիաներից կախվածությունը: Դասընթացները օգնել են ծնողներին ամրապնդել սոցիալական կապերը և համագործակցել իրենց երեխաների հետ: Տեսական և գործնական գիտելիքների շնորհիվ ծնողները ավելի վստահ են իրենց երեխայի կարիքները հասկանալու և աջակցելու գործում:

**Բնաիրային աջակցությունը** կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներում օգնել են հաղթահարել այդ պահի ճգնաժամը, ինչպես ընտանիքներին տնտեսական մեծ օգնություն է եղել երեխաների զրենական և հիգիենիկ պարագաներով ապահովելը, վարձավճարների գումարներ փոխանցելը:

**Անձնակազմի վերապատրաստումների** արդյունքում աշխատակիցները ձեռք են բերել նոր գիտելիքներ բնապահպանության և էներգաարդյունավետության վերաբերյալ: Սոցիալական աշխատողները թարմացրել են իրենց պրակտիկ հմտությունները և տեսական գիտելիքները Սյունիքի պետական և ոչ պետական կառույցների անձնակազմերին դասընթացներ վարելու ընթացքում: Սուպերվիզիաները օգնել են նոր մոտեցումներ ոդեգրել աշխատանքներում և բարձրացնել արդյունավետությունը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Օճառագործության վարպետության դաս, Փոքրիկ Բնապահպանն ծրագիր
https://www.facebook.com/reel/1139210407077365

Դաունի համախտանիշի միջազգային օր

https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/813806920783577

Այց Հոլքի Կանաչ ուսուցման կենտրոն
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/819700153527587
https://www.facebook.com/reel/1133624687660573

«Շրջակա միջավայրի պահպանության և բնապահպանական կրթության հիմունքներ» թեմայով դասընթաց
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/820998856731050

Նկար նկարչական խմբակից
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/823502346480701

Համատեղ միջոցառում ցերեկային կենտրոնների և ՀԿ-ների հետ՝ Մշակութային օրվան նվիրված: Շանթ և Ծայգ ՀԸ-ների արձագանքը
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/827969192700683
https://www.facebook.com/reel/263469860190674
https://www.facebook.com/ArmenianCaritas
https://www.facebook.com/watch/?v=960055368746085
https://www.facebook.com/TSAYGITV/posts/900419315428303
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/833769365453999

Փոքրիկ Իշխան կենտրոնի փողոցի հարթեցման աշխատանքներ
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/832408645590071

Ճանաչողական այց, Վարդերի ջերմոց
https://www.facebook.com/reel/400053019598628

Երեխայի լավագույն շահը, համատեղ միջոցառում, Ծայգ ՀԸ-ն արձագանքը
https://www.facebook.com/TsaygTV/posts/2618955648278171

Ախուրյանի կիրճ քայլարշավ և դասընթաց
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/838910231606579

Երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկման ակցիաներ
https://www.facebook.com/reel/987922619604045
https://www.facebook.com/reel/833593191920013
https://www.facebook.com/reel/800946824918105
https://www.facebook.com/reel/422157603907880
https://www.facebook.com/reel/360004980393407
https://www.facebook.com/reel/992551902204528
https://www.facebook.com/reel/430153579725850
https://www.facebook.com/reel/1447645649460728
https://www.facebook.com/reel/419990194250030

Երեխաների այցը Գյումրու համայնքապետարան
https://www.facebook.com/gyumruhamaynqapetaran/posts/772634291673702

Ընտանիքի պաշտպանության միջազգային օր, միջոցառում
https://www.facebook.com/watch/?v=1387633612638483
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/850638177100451

Այց Հայհիդրոմետ ՊՈԱԿ-ի Գյումրիի օդերևութաբանական կայան
https://www.facebook.com/HydrometeorologyandMonitoringCenter/posts/467743233605141

Երեխաների պաշտպանության միջազգային օր, միջոցառում
https://www.facebook.com/watch/?v=1169408151159557

Համայնքային ներառական միջոցառում՝ Վանաձորում
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/870195105144758

Այց Արփի ազգային պարկ և Խոսրովի անտառ պետական արգելոց
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/878920857605516

Կրթական ճամբար՝ «Ներառականություն, կրթություն, նորարարություն»
https://www.facebook.com/watch/?v=512233624708512

Միջմշակութային երկխոսություն բաց երկնքի տակ
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/890909173073351

Հատապտուղների փառատոն
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/894733096024292

Բնապահպանական բակային ճամբար
https://www.facebook.com/watch/?v=822194586692261
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/906897721474496

«Ոչ Բռնությանը» միջոցառում
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/944930957671172

«Երեխայի լավագույն շահը. բուլինգի կանխարգելումը գործողության մեջ» միջոցառում
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/972317101599224

Ցայց հեռուստատեսության արձագանքը Երեխայի լավագույն շահը միջոցառում
https://www.facebook.com/TSAYGITV/posts/1055809426555957

Երեխաների իրավունքների իրազեկման բարձրացում, միջոցառումների շարք
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/981031467394454
https://www.facebook.com/watch/?v=1569111290357242

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

| |
|---|
| Ամենաշատ խնդիրը եղել է երեխաների վատ հաճախելիությունը հիվանդությունների պատճառով, Մի քանի արցախցի ընտանիքների դուրս գալը տրանսպորտի վճարի պատճառով: |

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

| |
|---|
| Հաջորդ եռամսյակում շարունակվում է սոցիալ-հոգեբանական և լոգոպեդական անհատական և խմբային աշխատանքները:<br>Շարունակվում են կողմնորոշման խմբակները, մենթորինգի ծրագիրը, համայնքային նախաձեռնությունը:<br>Առողջ ապրելակերպի միջոցառումներ են իրականացվելու. սպորտլանդիա և քայլարշավներ:<br>Համատեղ միջոցառումներ Կենտրոնում և Կենտրոնից դուրս. Ընտանիքի միջազգային օր, Բուլինգի կանխարգելման միջազգային օր, Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր, Այցեր մշակութային կենտրոններ և այլ կառույցներ:<br>Դրական ծնողավարման և աշխատանք փնտրելու հմտությունների դասընթացներ ծնողների հետ: Ինքնաջակցման խմբեր ծնողների հետ:<br>«Փոփոխությունը ես» եմ ՍՁ ծրագիր, փափուկ հմտությունների և բնապահպանական դասընթացներ և էկո ակումբ և պրակտիկ աշխատանքներ երեխաների հետ: |

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

<table>
<tr><td colspan="2">Եռամսյա ժամանակահատվածում իրականացվել է միայն նախօրոք ժամանակացույցով պլանավորված գործողությունները:</td></tr>
<tr><td>ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ք. Երևան, Կառավարական տուն-3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011030732<br>ՀՎՀՀ 01506515<br>Գլխավոր քարտուղար՝<br>Սամվել Մուրադյան<br>________________________<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ.</td><td>ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ<br>«Հայկական Կարիտաս» ԲՀԿ<br>ք. Գյումրի , Հ.Մարգսյան 3-րդ նրբ., 8ա.<br>«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»ՓԲԸ «Շիրակ»մ/ճ<br>Հ/Հ 220063350387000<br>ՀՎՀՀ 05514397<br>Գործադիր տնօրեն՝ Գագիկ Տարասյան<br>________________________<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ.</td></tr>
</table>